ՇԱԲԱԹ 30 ՊԵՊՏԵՄԲԵՐ 1906 թիւ 850

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 «
Արտասահմանի համար տարեկան 15 ֆր.
վեցամսեայ 8 «
Ամերիկայի համար տարեկան 3 տլ.
վեցամսեայ 1.50 «

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է։ Երեքից աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ ընդունիւայ։

—o—

Վաճառքի համար ձեռք 10 սանթիմ է

Դամակ եւ դրամ ղրկել հմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ "Шаржумъ„ Варна

Redaction du journa „Charjoum» Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռք 15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵՑԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԵԿ ՎՃԱՐԷ

«ՏԱՍ ՏԱՐԻ Հ. Ց.
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Արդէն այս անունով բը բոշիւրը յանձնված է տպագրութեան։

Բրոշիւրի նպատակն է, առանց խոցծանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՝ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց։ Բնական է որ բրոշիւրի մէջ փաստող գոկիմանները մեծ տեղ պիտի գրաւեն։

Բրոշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր։

Դիմել «Շարժումի» Խմբագրութեան

Café Promenade Vienne

Այս շքեղ քաֆէն կը գտնուի Վիէննա Ֆրանց Ժոզէֆ քարափին վրայ։ Կըստանայ զանազան հայերէն թերթեր։ Առ հասարակ բոլոր հայ կամարեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն։ Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար գիւրութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւնները։

ՇՏԱՊԵԼ ՊԷՏՔ Է

«Մշակ»ից և այլ թերթերի արտատպումներից, որոնց հեղինակները մեծ մասամբ դաշնակցական անցեալ և ներկայ գործիչներ են, պարզօրէն երեւում է թէ՝ Դաշնակցութիւնը երեւակայածից աւելի խառնաշփոթ դրութեան մէջ է ու կրէս չանտօ դիմում է դէպի կործանում։ Վիճաբանում են իրարու հետ, լրագրական էջերում, վարիչները, զինուորները, հարիւրապետները։ Իսկ հայ և օտար գործիչները աղերսում են համերաշխութիւն, կրքերի սանձահարում։

Պարզ է թէ գործը այն դրութեան հասել է որ աղերսով, կոչերով անկման առջեւը չի առնուի։ Միայն ընդհանուր ժողովը պէտք է փութացնել արմատական վիրաբուժական գործողութիւնը կատարելու և կազմակերպութիւնը փրկելու համար։

Ամբողջ երկու տարի է որ Դաշնակցութիւնը բոլորովին անհատական քմահաճոյքներով է կառավարվում։ Սասունի դէպքից յետոյ, մենք չենք ունեցել այդ մասի Պատասխանատու մարմինը։ Չենք ունեցել երբէք Լեռնավայրի պատասխանատու մարմինը։ այնպէս որ 1905ի Դաշնակցութեան Խորհուրդը արդէն կարգին կազմ չէ ունեցել, որ կարենար Դաշնակցութեան Դիրեկտիվը որոշէր մինչեւ ընդհանուր ժողովը։ 1906ի յունուարի խորհուրդը եկէ հաւաքվել է, արդէն բոլորովին անկանոն է եղել։ որովհետեւ այդ միջոցին գոյութիւն չունէր և Ցուցական Մարմինը։ Ուրեմն այդ խորհուրդում եղել են միայն բիւրօցիները։ Այնպէս որ ամբողջ երկու տարի Դաշնակցութիւնը ղեկավարվել է սիրող յեղափոխական բիւրօցիների ղեկավարութեամբ, որոնք Դաշնակցութեան տուել են իրենց ուղած ուղղութիւնը և նրա հարստութիւնը վատնել իրենց ուզածի և որոշածի համաձայն։ Եւ եթէ դաշնակցութիւնը այսօր այս տխրալի կերպարանքն ունի, ուր դիմում է դէպի անկում այնքան անկասկածելիօրէն որ ամբողջ դաշնակցական հին և նոր գործիչներ, Անդրանիկ, Պիէր Քիար կովկասեան և արտասահմանեան մամուլում աղերսում, պահանջում են դժգոհներից կազմակերպութիւնը չը պառակտել, հասկացվում է թէ ընդհանուր ժողովի գումարումը հրամայողական և անմիջական է, այպէս զի Դաշնակցութիւնը կորզվի դաշնակցութեան օլիգարխների ձեռքից։

* * *

«Ինչ կը ցանես, այն կը հընձես» ասում է առածը։ Դաշնակցութեան այս դրութեան հասնելը ի հարկէ ինձ և «Շարժումի» ընթերցողների համար տարօրինակ և զարմանալի չէ։ Ինը տարի է որ մենք մատնանշում էինք Դաշնակցութեան փտանգաւոր վէրքերը իրենց սաղմում և պահանջում գեռ սաղմում ոչն չացնել այդ վէրքերը։ 1904ի ամրանից այեւս համբերութիւնը հատած, «Բաց նամակներով» ճը չացինք բոլոր գիտակից դաշնակցականներից պահանջելով ճիշում բանեցնել որ ոչ մի գործ չը ձեռնարկվի մինչեւ ընդհանուր ժողովը։ մենք գիտէինք թէ գործերը ինչ մարդկանց ձեռքում են մնացել և նրանք մինչ ուր կը հասցնեն կազմակերպութիւնը։ Մեր ճիշը թէեւ անլսելի չը մնաց, բայց փութկոտութեամբ չը գործվեց։ փտանգաւոր ընթացքի առջեւը չառնվեց։ լաքէները և կացութեան տէր, յեղափոխութեան համար մաղ իսկ չը զոհող յեղափոխական աւանտիւրիստներ և պարվիներ խեղդել ուզեցին մեր արդարացի պահանջները դաղանական ճիգեր թափելով մեզ արատաւորելու, նիթապէս և բարոյապէս խեղդելու համար։

Բայց ժամանակը, կեանքը ըստ պեցին հասնելու աւելի խրատաւորէն, աւելի դաժանորէն վաւերացնելու այն ինչ որ մենք էինք մատնանշում։ մի վայրկեանում անհետացաւ արհամարհելութեան տրամադրութիւնը և այսօր լաքէները պուճախները մը տած, խոշորները են մէջ տեղ գալիս ոչ հերքելու, ոչ մերժելու համար, այլ իրողութիւնը վաւերացնելով «Խնայեցէք աղերսելու։

Զարմանալի է թուում ինձ այդ յուսահատական "Խնայեցէքի աղերսական ճիշը «աղգին մեծ, սարսափելի վնաս գալու» ուրուականին կցված։ Աղգը, հայրենիքը կը վնասուէր և անբուժելիօրէն, եթէ դաշնակցական ներքին փտած և ախտաւորված իրականութիւնը շնորհիւ վարձկան պարապիտների յարատեւ էր վարագուրված մնալ։ Փրկարար ճակատագրական վայրկեանում, երբ զինված ճիգի պէտք լինէր գրոհ տալու բռնակալի դէմ մենք պէտք է ունենայինք գադարկ դրամակղ։ փչացած զինուորներ, ապականված հրամանատարներ, սիրող բիւրօկրատ, յեղափոխական պարվիներ որոնք աղգին և հայրենիքին պէտք է մատնէին վերջնական կորուստի։

Դաշնակցութիւնը իր բոլոր գործոններով պէտք է ներկայանար մեզ Մանչուրիոյ ռուս բանակը, որը միանգամ ընդմիշտ արատաւորեց միշտ յաղթական Ռուսաստանի զէնքն ու դրօշը։ հայրենիքը ծաղր ու ծանակի նիւթ դարձնելով ամբողջ աշխարհում։

Ու աւելի լաւ չէ՞ որ այսօր է որ հայ ժողովրդի առջեւ մերկանում է Դաշնակցութիւնը իր թերութիւնների հսկայական բազմով և մենք ժամանակը ու հնարաւորութիւնը ունենք մէջ տեղից վերացնելու այդ թերութիւնները և նոր ուժ, նոր ոգի զգեցած դիմելու մեր նպատակին անսայթաքօրէն և առանց վարանումի։

Խնդրեմ ասացէք, ի՞նչ նշանակութիւն ունի համերաշխութիւնը այն տարրերի հետ որոնք յեղափոխութիւնը ապրելու, դիրք ստեղծելու միջոց են ընդունում միայն։ ի՞նչ նշանակութիւն ունի համերաշխութիւնը այն տարրերի հետ որ տասնեակ հազարներով ցեղակիցներ կարող են զոհել, միայն ցոյց տալու համար թէ կազմակերպութիւնը գործի վրա է։ ի՞նչ նշանակութիւն ունի համերաշխութիւնը այն տարրերի հետ որոնց համար սուտը, կեղծիքը, փախկոտութիւնը ամենալաւ միջոցն է

յեղափոխական կեանքի իրականութիւնը թագցնելու համար. միայն ՀԱՍԱԿԱՐ արդիւնք ուրիշ ոչինչ։

Ու դաշնակցական ներկայ խառնակ, աղտոտված մթնոլորտում, ուր աբեստականօրէն համախմբված են հակասական տարրեր, հակասական բարոյական, քաղաքացիական, ընկերային հասկացողութիւններով, համերաշխութիւնը, իրարու թըքով կպցրած համերաշխութիւնը ամենավտանգաւորն է հայոց ազգի համար. ընդհակառակը, զտումը, ՀԱՍԱԿԱՐ, փտած անդամ տարրերի հեռացման գործողութիւնն է որ պէտք է տեղի ունենայ և դրա կատարողը պէտք է լինի ընդհանուր ժողովը, որը պէտք է փութացնել։

Ծանձի ծառի վրայ շատ փտած պտուղներ կան. ծառը կոտրւում է. պէտք է ուժգին կերպով թափահարել, մինչև իսկ ծառը բարձրանալ փտածները թափելու. հոգ չէ եթէ պարտաւորված լինենք բազմաթիւ ճիւղեր կոտրտել....

Մաքրագործում, ոչ համերաշխութիւն. այդ պէտք է լինի ժողովրդի և բոլոր գիտակից ու անձնուէր դաշնակցականների լօզունգը.... Մեր Եւրոպացի բարեկամները շատ չնչին ծանօթութիւն ունին մեր կազմակերպութեան մասին և նրանց տեղեկութիւնների աղբիւրները այնքան էլ յստակ չեն։..... թող նրանք անգիտակից գործիք չը դառնան ներկայ ամենաՀԱՍԱԿԱՐ կացութեան տէրերի ձեռքում.... և մեզ չսպառնան Եւրոպացի բարեկամների դժգոհութիւնով....

ՎԱՐԴՕ



ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՔՐՕՆԻԿ

ՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԴԺԳՈՀՆԵՐԻՆ

(Նամակ խմբագրութեան)

Կարդալով «Մշակ»ում դժգոհ խմբագրապետների բողոքը Դաշնակցութեան կազմի մի քանի անհատների դէմ, եզրակացրի, որ այդպիսի բանակռիւներով ոչ մի նպատակի հասնել չէ կարելի։

Նախ Դաշնակցութեան տէրը նրա կարգադրութիւնները տակտիկայի վերաբերմամբ բեկանողը, կնահատողը է միմիայն Դաշնակցութեան համագումարը, որին պէտք է դիմեն բողոքողները իրանց ներկայացուցչապագամաւորների միջոցով։

Երկրորդ, կովկասեան նախագիծը, որի դէմ են դլխաւորապէս դժգոհները, երեւան է եկել որպէս ժամանակի մի հրամայողական պահանջ, և նա տեղական մարմինների քննադատութեան արգասիք չէ. այլ նախօրօք գծվել եւ հրատարակվել է վերջին համագումարի վճռով եւ հաւանութեամբ։

Կովկասահայը նոյնպէս իրաւունք ունի ժամանակի օգուտ համաձայն գործելու, որքան նրա հարեւան ռուսն ու վրացին, որոնց հանդէպ Դաշնակցութիւնը չէր կարող մնալ լուռ ականատեսի դերում։

Երրորդ, ոլովնետեւ դժգոհութիւնները, որոնք շարունակվում են և անընպատակ վիճաբանութիւնների առիթ տալիս, եւ կարող են առաջ բերել բարդութիւններ եւ նոյնիսկ հղբայրասպանութիւններ. առաջարկում եմ.— բոլոր դաշնակցականները որոնք գտնվում են Ճաճկաստանում, Ռուսաստանում եւ Եւրոպայում անմիջապէս ձեռնարկեն պատգամաւորների ընտրութեան, ընտրելով այնպիսիներին, որոնք հաւատով, հեղինակութեամբ եւ փորձառութեամբ կարդարացնեն Դաշնակցութեան յոյսերը եւ կընթանան համաձայն ոգուն Դաշնակցութեան գծած ուղղութեամբ։

Երկու և կէս—երեք ամիս ժամանակ կայ մինչ համագումարը, ուրեմն թողէք այդ անընպատակ բանակռիւները և զբաղվեցէք բուն խնդրով եւ աշխատեցէք այս ծանր ու պատասխանատու գործը դնել բարձր եւ գործնական հողի վրա. թողէք վիճաբանութիւնները։

Ղարա Մէլիք

ՓՈՇԻ ԲԱՐԶՐԱՆՈՂՆԵՐ

Անհունաբ մարդու լեզուն երկար կը լինի. դատարկ կարասը զնգզնգան կը լինի...

Առածներ

Անհամեստ են մեր «գործիչները», ռուսահայ իրականութեան հրապարակի վրա եղած մեր ինտիլիգենտ փահլեվանները։ Մաքուր չէ հայ կեանքի հրապարակը, հողն ու փոշին գլուխնք որ դարերով է կուտակուած։ Եւ ահա մեր ըմբիշները իրանց «եռանդուն գործունէութեան» եւ «փառաւոր յաղթանակների» միջոցին մեծ հարայ-հրոց, աղմուկ աղաղակ են բարձրացնում, խեղդող փոշին երկինք հանում։ Իսկ շրջապատից նայողներին թւում է թէ նրանք շատ մեծ-մեծ գործեր են կատարում՝ որ այդքան աղմուկ իրարանցում են բարձրացնում, այդքան փոշի հանում։ Բայց. ո՛ հիասթափութիւն. երբ աղմուկ աղաղակը դադարում է, փոշին պարզվում, տեսնում են. մէջտեղում գործ չէ արված։ «Դղրդաց երկինք ու երկիր, երկնեց սար ու ձոր եւ ծնաւ մուկն»— ահա ռուսահայ գործունէութեան այժմեան հրապարակը ահա մեր զոշաղ փահլվանների ցիրկը։

Փոշուց, աղմուկից ու հարայ հրոցից աւելի եւ ազատ պիտի լինի յեղափոխական գործունէութիւնը, այդ մաքուր, այդ վեհ ու անարատ, այդ զուտ գաղափարական ու սրբացած գաղտնի գործունէութիւնը։ Ազնիւ, անձնուրաց, մաքուր յեղափոխական գործիչները, պատկառելի դէմքերը թմբուկ չեն խփում, փոշի չեն բարձրացնում, այլ համեստ, լռելեայն իրանց սուրբ գործն են առաջ տանում, առանց ծափահարութիւնների, առանց կէցցէների ու ոգեւորութիւնների,

Մեր կեանքը տուե՛լ է մեզ այդպիսի մաքուր ազնիւ գործիչներ, իսկական յեղափոխական գործիչներ, հերոսներ՝ որոնց հսկայ ստուերների տակ «ՉԻՐԻԴ» են խաղում մեր այժմեան «իգիդները»։ Նրանք իրանց կեանքում շատ հասարակ ու պարզ մարդիկ էին, գործում էին առանց թմբուկի եւ զուռնայի, «բիսներ և ծափահարութիւններ չէին սպասում. նրանց վարձատրութիւնը կապանքն էր ու չղթան, նրանց մխիթարութիւնը բանտը եւ աքսորը. նրանց հանգիստը սառը գսրեզմանը։

Համբո՛յր նրանց նուիրական չիրիմներին...

Լիւցիֆեր

«ԲԱՑ ՆԱՄԱԿ ՄԵՐ ԲՆԱԴԱՏՆԵՐԻՆ»

(Նամակ խմբագրութեան)

Մեր դէմ շարունակվող յարձակումները միատեսակ են։ Փաստերը մի բան են ցոյց տալիս, որ մեր քննադատները ընկել են պատէ պատ. և ամեն անգամ մեր գրածների դէմ իրանց դիրքը պահպանելու համար յենարան են ընտրել «աշխատաւոր ճնշված ժողովրդի շահերը». սակայն ո՞ւմ են ուզում զարմացնել մեր այդ փոքրիկները որոնք ցանկանում են Բէբէլներին ու Ֆորէսներին նմանել։ Իմ գրածների մէջ մինչեւ այժմ աշխատաւոր դասակարգի հասցէին չէ եղել ոչ մի վիրաւորական ակնարկ։

Իսկ ինչ վերաբերում է այդ նոյն աշխատաւորի անունից երդում ուտողներին, այո՛, Նրանց գոյնը կը պարզվի ոչ միայն դաշնակցական զինուորների եւ հայ ժողովրդի առաջ, ա՛յլև այդ զինուորներից եւ հայ ժողովրդից առանձին բանակ կազմող աշխատաւոր դասակարգի առաջ։ Ուստի այդ երկայնամիտ իրանց Ֆորէսներ և Բէբէլներ կարծողները ի զուր անհանգիստ չը լինեն՝ ինչ որ իրողութիւն է, մենք խօսելու ենք. իսկ եթէ նրանք մեծ կարծիքներ ունեն իրանց մասին, որ աշխատաւոր մասսան, եւ դաշնակցական զինուորը, եւ հայ ժողովուրդը ընդհանրապէս, նրանցով միայն պիտի բաղդաւորվին, դա բացարձակ անհեթեթութիւն է։ Նրանք բոունցքներից, հայհոյանքներից ջոկ ուրիշ ոչ մի բան չունեն մեզ բաղդաւորեցնելու. եւ ուրեմն

ՄԱՆԻԱ

9

(Վէպ Հայ Յեղափոխ կեանքէ.)

ԳԼՈՒԽ Զ.

Մարդավազովը այս խորհրդածութիւնների մէջ էր երբ Նրան դիմաւորեց մի 19—20 տարեկան օրիորդ, ուրախ ուրախ ճչվլալով։

— Հայրիկ, ամերիկեան ատրճանակները հասած են, եկած են եւ նոր տեսակի ռուսբները. տղաները այս օր մտադիր են քաղաքից դուրս փորձ կատարել, եկան քո՛զ փնտռեցին. ես գիտէի որ քեզ անպատճառ այստեղում կը գտնեմ, չտպեցի գալ իմացնել։ Ներա՛ք գնացին բիրարիան. այնտեղ ձեզ սպասում են։ Այսօր լաւ տրամադրութեան մէջ ես դտնըվում հայրիկ. երբէք դէմքդ այդպէս պայծառ չեմ տեսել. քո աղջիկը դառնալու օրից սկսած

Խօսակցութիւնը տեղի էր ունենում Ռուսերէն, մի կասկածելի թուրք մի քիչ հեռուն կանգնած դիտում էր Մարդավազովին եւ օրիորդին. նա վազուց էր այնտեղ ինչպէս երեւում է Մայդս վսլովի գալու վայրկեանից, սակայն Մարդավազովը հիմա էր որ նկատեց կասկածելի անձի ներկայութիւնը։

— Այս պարոնը այստեղ է՞ր, երբ դու եկար Իլյա, թէ քեզ հետ միասին եկա՞ւ։

— Ոչ հայրիկ. նա այստեղ էր. ես հեռուից նկատեցի որ աչքը քեզնից չէ հեռացնում. ինչպէս երեւում է լրտես է։

— Էհ. վնաս չունի. հիմա որ եկար Նրա կասկածները բոլորովին կը փարատվեն. եկ մի քիչ նստենք այն ծառի տակի նստարանի վրա հէ՛ց թուրքի կողքին։

Այս առաջարկութեան վրա Մարդավազովը հայրական գորովով բռնեց Իլյայի ձեռքը՝ եւ մօտեցան նստարանին, ու նստեցին։ Թուրքը մի թափանցող ակնարկ նետեց. կարծես ինքն էլ համոզվեց որ զոյգը հայր ու աղջիկ են, ու անմիջապէս հեռացաւ։

— Հա, Իլիա ասում էիր՝ թէ այսօր դէմքս շատ պայծառ է։ Ես էլ ներքնապէս այդպէս եմ զգում. երբէք տասնեակ տարիների ընթացքում այսպիսի խաղաղ հոգեկան վիճակում չեմ եղել... դու դեռ շատ երիտասարդ ես չը գիտես թէ մարդու անհատական կեանքը հակասութիւնների մի հսկայական աշխարհ է։ Հակասութիւններ որոնք շարունակ պայքարի մէջ լինելով մարդի ներքին աշխարհը անդսպելի փոթորիկների են վերածում։

— Դէ, դնանք այժմ. իմ նպատակս էր հեռացնել այդ կասկածելի թուրքին. տղերքն հիմա սպասում են։

— Հայրիկ, իհարկէ ես էլ կը գամ ձեզ հետ, այդ փորձերը տեսնելու դեռ այդ բաւական չէ ես էլ պէտք է մասնակցիմ այն մեծ գործին, որը թէեւ դեռ չը գիտեմ ինչ է, բայց համոզված եմ որ աշխարհ դղրդացնող պէտք է լինի. իհարկէ դու մեզ այստեղ չը բերիր որ մենք միայն փաստենք թէ դու ամուսնացած, տեր, ինձ պէս հասած աղջիկների հայր ես եւ չես կարող յեղափոխական գործերով զբաղվել. մենք պարզապէս մնքենաներ կլինէինք այդպիսի պարագայում։

— Չեմ կարող խօսք տալ Իլիա, որ դու էլ անպատճառ մասնակցես գործին. փորձին իհարկէ կարող ես գալ Բայց գործին չըմասնակցես էլ կը լինի Արդէն մեծ գործ ես կատարում. ձեր ներկայութիւնը որ այնքան տեղի անտեղի կասկածներ է փսրատում մեծ ծառայութիւն է գործին։

— Ոչ. ոչ գործի ծառայութիւն մատուցանելը ուրիշ է. իսկ ուզղակի մասնակցելը ուրիշ։ Ես ուզում եմ մասնակցած լինել. խօսք տուր որ այդ այդպէս կը լինի։

— Եթէ գործի համար շատ մասնակցողների պէտք լինի, խոստանում եմ. բայց հաւատացած եմ որ շատ քիչ թւով մարդկանց պէտքը պիտի

լաւ կը լինէր, որ նրանք այդ հայհոյանքները եւ չոր ու ցամաք գաղափարական ֆրազները պինդ իցկէին իրանց անհատական նեղլիկ աշխարհը եւ զրկէին նրանց լոյս աշխարհ ընկնելուց։ Եթէ իսկապէս դուք գաղափարական գործողներ էք, թողէք ձեր հայհոյանքները եւ խօսեցէք այն հիւանդութեան մասին, որ վարակել է մեր ընդհանուր կեանքը։

(«ՄՈՒՐՃ») Խմբագիտ Միհրան

Թիֆլիս 13 սեպտեմբերի

ԼՈՒՐՋ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋԸ

Վերջին ժամանակներս թէ քաղաքներից, թէ գաւառներից լսում են բողոքներ այս ու այն խմբապետի կամ գինուորի սխրագործութիւնների վերաբերմամբ։

Իսկապէս ասած, այդ բողոքների մեծ մասը ճշմարտութիւններ են, այսօրուան ճշմարտութիւններ. մենք Դաշնակցութեան ներսում համակրողներս էլ, խոստովանում ենք որ կատարում են դրանք Դաշնակցութեան անդամները եւ առիթ են տալիս հակառակորդներին մատի փաթաթան անելու եւ վարկաբեկելու ամբողջ կազմակերպութիւնը որին ոչ միայն ամբողջ հայութիւնն էր համակրում եւ աջակցում, այլեւ օտար ազգեր պատկառանքով էին նայում եւ փառաբանում նրանց հերոսների անօրինակ քաջութիւնները։

Ո՞նչ եղան արդեօք այն մաքուր հերոսները, միթէ՞ վայրենացան եւ դաւաճանեցին իրանց սիղբունքին նրանք, որոնք քաղցած, ծարաւ Սասունի, Շատախի լեռներում, Մուշի դաշտերում պտրտում էին եւ հայ կեանքն ու պատիւն էին պաշտպանում հրացանը ուսերին. իսկ այժմ կովկասում կրակ ու պատիժ են դարձել ժողովրդի գլխին եւ զայրոյթ են առաջացնում։

Երբ հետեւում ենք եւ մանամասն ծանօթանում իրերի դրութեան հետ, տեսնում ենք որ այն իսկական գինուորները չեն ժողովրդի ցաւերով տանջուող յեղափոխականներ, պատռած կօշիկներով ման եկող Սեպուհներ չեն, այլ Թիֆլիզում քունչ ու պուճախներում դատեր վճռող (տիկնալ տիժուր շարլվարներով) չայտնի հարիւրապետներ են. ի հարկէ ցաւալի է կարդալ լրագրի էջերում Դաշնակցութեան հասցէին բողոքներ, երբեմն արգարացի, երբեմն հակառակորդների չափազանցրած զրպարտութիւններ։

Բայց այլեւս ցաւելով ենք կարդում «Մշակում» լոյս տեսնող մի քանի հարիւրապետ— խմբապետների նամակները. Նրանք էլ են բողոքում եւ հրամայում են բոլոր գործիչներին հեռանալ ասպարէզից, որովհետեւ արժանի չեն Դաշնակցութեան սուրբ դրօշակը կրելու։

Նրանք էլ են բողոքում, որոնց շնորհիւ է այս դրութիւնը եւ պատճառ են այս սխրագործութեան.

. . .

Միհրանին աւելի լաւ պէտք է գնահատեն նրա այն ընկերները, որոնց հետ նա արշաւանքի է գնացել։ Ինչու նրանցից ոչ մէկը չը կայ ձեր շարքերում։ Ինչ իրաւունքով էք պահանջում Ռուսահայից Ռուսաստանի ազատագրական շարժումից ձեռնապահ մնալ եւ զբաղվել միմիայն Տաճկահայերի գործով։

Բայց սրեւնոյն ժամանակ պէտք է բողոքենք, եթէ Դաշնակցութիւնը մոռացութեան տայ այն խնդիրը որ հարիւր հազարաւոր զոհերի պատասխանատու է։ Մենք ճանաչում ենք այն մի շարք հարիւրակների հարիւրապետ Ուսրշատներին՝ թէ ինչ յեղափոխական են։

Արիք անկեղծ ասէք. դուք կովկասեան նախագծի կամ արհեստական միութիւնների վնասակարութիւնը Տաճկահայ դատին գուշակելով էք բողոքում, թէ՞ ձեր ձեր հարիւրապետութեան փառքի կործանումն էք տեսնում։

Մենք գիտենք, որ շատ են այդ բողոքողներ, խմբապետ Միհրան պահանջումներ ունի ինչպէս եւ շատեր։ Ինչու չէր դիմում նրանց եւ իր ձայնը մեցնում նրանց հետ՝ հրաւիրել համագումար ժողով եւ վերջ դնել այն խայտառակ դրութեան, որ Դաշնակցութիւնը մաքրվէր անարժան կոմիտէներից, խակ պրոպական. դիսներից եւ ղուլդուր խմբապետներից եւ գինուորներից, որոնք հա-թիւրքական անմիտ կռիւների շնորհիւ այնքան բազմացան։

7–8 ամիս առաջ երբ միտինգներ էին տեղի ունենում, ճառախօսները մի քանի անգամ չեշտեցին թէ Դաշնակցութիւնը բնականաբար պէտք թողնէ մի առժամանակ Տաճկաստանը որովհետեւ մարդու համար իր կայրն աւելի մօտ է Խուլ բողոքներ սկսվեցին թէ Տաճկահայերի եւ թէ նոյն դատի հակառակորդների կողմից. թէ՝ Դաշնակցութիւնը չէ կարող այն դատը չը շարունակել, որի գոյութեան հիմնաքարն է։

Դիմումները տարածվում էին արագութեամբ, մի քանի անձնաւորութիւններ համարձակութիւն ունեցան հրապարակ դնել հարցը, մտքեր խաղաղեցնելու ժողովներ գումարեցին եւ որոշեցին հրաւիրել համագումար ժողով Տաճկահայերից, համակրողներից, երկրում գործող զինւորական ուժերից, որոնք պէտք է պարզէին երկրի գործունէութեան տակտիկայի խնդիրը եւ այլն։ Նախքան գործ սկսելը կազմված յանձնախումբը դիմեց Դաշնակցութեան Բիւրոյին, որը մեծ հաճակրանքով վերաբերվեց նոյն իսկ խոստացաւ ինքն գումարել։ Անցաւ մի ժամանակ, բայց նական ժողովում վճռվեց առաջնակարգ տեղ տալ Տաճկաստանի դատին եւ ընտրվեց մի մարմին որ ղեկավարէ երկրի գործը. Նրանք որոնք ծանօթ էին այդ անձնաւորութիւններին, վստահ էին նրանց գործունէութեան, լռեցին։ Իսկ մութ իրաւերի մէջ չար սաղմը մնաց. Դաշնակցութիւնը կարծելով, թէ դա մի քանի մութ անձնաւորութիւնների գործ է, անհետեւանք թողեց։

Լոյս ընկաւ խմբապետ Միհրան՝ պատրաստի հող գտնելով. այդ մութ ուժերի վրայ հիմնեց իր բերդը եւ սկսեց ոմբակոծել եւ թէ Տումաններին. Սեպուհներին եւ թէ կազմակերպութեան

Թող չը նեղանան կազմակերպութեան յարգելի էջերը իրանց ցանածը այժմ հնձում են։ Ազգային գաղափարով սնուցած մասսայի առջեւ անկեցին նրանց անհասկանալի սոցիալիզմը, որի լոկ անունը անջուշտ պէտք է խրտնացնի ամէնքին։

Շատ հարիւրակ կայ Թիֆլիզում. բայց գիտակից քանի՞ զինւոր ունենք։ Դրանք թող պատասխանեն կազմակերպութեան ղեկավարները։

Կոչ ենք անում մեր յարգելի հայրենակիցներին, իսկր հայրենիքի փրկարար գործի, յանուն մեր ճնչրուած ու ազատութեան ծարաւի եղբայրներին ու քոյրերին օգնելու գաղափարի եւ յանուն արդարութեան ու ճշմարտութեան զերծ մնալ «պրղտոր չրում ձուկ որսացող մութ ոյժերից եւ գիտակցաբար վերաբերվել ներկայ պատմական յիշատակելից մոմենտում կլսի մեր Ռուսահայ այն եղբայրների վիճակը, որոնք իրանց բարոյական աջակցութիւնը հարկաւոր ժամանակին չեն զլացեր երբէք։

Դասպար

«Մշակ»

ՄՈՒՐԱՏԻ եւ ԺԻՐԱՑԻ Միացեալ Պատկերը

Նուիրուած

Անմահ Ժիրայրի յիշատակին

Ամերիկայի Հնչակեան մասնաճիւղերու գործադիր յանձնախումբը, պատրաստած է նահատակ եւ կենդանի հերոս եղբայրներու, անմահ Ժիրայրի եւ քաջ մուրատի մեծադիր և չքեղ պատկերը։ Պատկերի վերեւը գրուած է հայկական նշանակները, ուր կը տեսուին Արարատ լեռը, Նոեան տապանը եւ Մայր Հայաստանը։ Հայկական դրօշակներու ծալքերէն կախուած են Մուրատին եւ Ժիրայրին նուիրուած ոտանաւորներ, Հընչակեան Զինանշան, որուն երկու կողմը գրուած են երկու զանգակներ Այ կողմը Մուրատի Սասուն գնալու ժամանակուայ պատկերը, ձախ կողմը Ժիրայրի եւ անոնց ներքեւ քաջ Մուրատի այժմեան պատկերները։ Ոչ մէկ ջանք խնայուած չէ պատկերը գեղեցիկ ընելու։ Գինն է 50 սէնթ

Կանխիկ

Ստանալ ցանկացողները դիմելու են Ամերիկայի Հնչակեան մասնաճիւղերու գործադիր Յանձնախմբին հետեւեալ հասցէով՝

Մ. ԼԱՄՊԷՐԹ, 199 Բ. Օ. Գօքս.

Մ. Ս. Նիւեորք-սիդի

—o—

գգացվի։ Վերջապէս այդ այսօրվան խնդիր չէ. մենք ուշանում ենք. գընանք. տղաները սպասում են. ժամանակն էլ անցնում է. ուշ չենք կարող քաղաքից դուրս գալ փորձը կատարելու։

Այս խօսքերի հետ Մարդավազովը վեր կացաւ ու Իլլիայի թեւը առնելով արագութեամբ հեռացան ծովափից։

* * *

Մի ժամից յետոյ, քաղաքի մօտ գտնուող բլուրներից մէկի լանջով բարձրանում էին Մարդավազովը, Իլլիան եւ երեք ուրիշ պարոններ։ Վերջապէս նրանք հասան մի ձորակի եզրին ու կանգ առին;

Երեք պարոնները գրպաններից հանեցին ատրճանակները. եւ երկու հատ դժոխային մեքենա։

— Առաջ մեքենան փորձենք. միջամտեց Մարդավազովը. ատրճանակների փորձը այնքան կարեւոր չէ։

Երիտասարդներից մին պատասխանեց.

— Շատ լաւ, մի քիչ հեռացէք. փորձում եմ։

Մարդավազովը հեռացաւ մի քանի քայլ. միւսները բաւական հեռացան, վայրկեան չանցած դժոխային մեքենան պայթեց. աշխարհը որոտաց. շրջապատը կորաւ մթութեան մէջ։ Ներկաները սարսռեցին եւ բնազդմամբ սկսան փախչել. Իլլիան ճչում էր. հայրիկը, հայրիկը, նա ընկաւ։ Մութը մի վայրկեանից փարատվեց։ Փաղչողները մօտեցան. ոուսբ նետողը բոլորովին անհետացել էր. իսկ Մարդավազովը իր կանգնած տեղից մի քանի քայլ հեռու մէջքի վրա փռված էր. Ընկերները շրջապատեցին. նա շրթունքները շարժեց բայց բառ արտասանել չը կարողացաւ... Նա նոյնիսկ ընկերների նայել դադարեց ու սկսեց իր մոլորված նայվածքը թափառեցնել անհուն տարածութեան մէջ։

Ռումբ նետողի մասին մտածող չը կար. նա չէր երեւում կարծում էին որ ողջ է։

Մարդավազովին մօտեցաւ ընկերներից մին համբուրեց նրա ճակատը, ու դառնալով ընկերներին ասաց.

— Դժբախտ էր այս մեր ընկերը, հազիւ հազ որոշեց խօսքը գործի վերածել. Ֆրազիօր Ռուդինից Համլետից իրական գործի մարդ դառնալ, ճակատագիրը այստեղ էլ դաւաճանեց. նա չը զոհվեց գործի մէջ. այլ գործի կողքին. զոհ գնաց պատահականութեան. բայց ոչ գիտակցօրէն մահը գրկեց.. մեռաւ այն վայրկեանին երբ մահը դեռ իրենից հեռու էր կարծում, որի հետ ճակատ ճակատի պիտի գար մի քանի օրից յետոյ։

Այնուամենայնիւ յարգանք իր յիշատակին. նա արաւ այն ինչ որ կարող էր մեր սուրբ գործի մէջ։ Մեղաւորը ինքը չէր որ մենք նրանից շատ բան էինք սպասում. այլ այն տափակ սարուկ շրջապատը որ Մարդավազովին ըմբոստացումի գործնական մարմնացում էր ճանաչում եւ ըստ այնմ վերաբերվում դէպի նա։ Այդ անհմն վերաբերմունքն էր Մարդավազովին մղողը դէպի այն գործը որ իր կամքից եւ հոգեկան ուժերից վեր էր, ու կարելի է վերջին վայրկեանում վարանէր։ Թերեւս այս պատահականութիւնը փրկեց նրան աւելի մեծ հիասթափումից։...

— Ոչ ոչ. նա սուրբ էր ճչաց Իլլիան մարմնացում ըմբոստութեան. դուք զրպարտում էք նրա անշունչ դիակը։

— Սուրբ Թերեւս, որովհետեւ սուրբ լինելու համար շատ մեծ բաներ պէտք չեն. բայց ոչ ըմբոստացման մարմնացում։ Ձախող ծնված մի ազնիւ մարդ էր նա եւ ձախող վերջ ունեցաւ։

Հանգի՛ստ իւր ոսկրներին։

—◆ ՎԵՐՋ ◆—

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԽԻԴԻՐԸ

Անցեալ համարում յայտնեցինք թէ՝ Տաճատ վարդապետի հրաւիրած ժողովում հարց է բարձրացել՝ արդեօք հին պատգամաւորներով ժողով գումարե՞լ առաջնորդ ընտրելու համար, թէ նոր պատգամաւորներ ընտրելու։ Վերջին առաջարկ անողների պատճառաբանութիւնը եղել է այն որ հիմա կարող են քաղաքներ լինել որոնք իրենց հին պատգամաւորին այլևս չեն ուզենայ ընտրել։

Մեր կարծիքով այդ հարցը երկու տեսակ կարելի է լուծել։ Առաջին՝ այն քաղաքներին՝ որոնք չեն ուզում իրենց հին պատգամաւորը ունենալ առաջարկել նորը ընտրել։

Երկրորդ՝ առաջարկել միայն այն քաղաքներին ընտրել պատգամաւոր, որոնց պատգամաւորները ձայն էին տալիս Վահան վարդապետին ու ընտրված էին շնորհիւ այդ անպիտան կղերականի ինտրիգներով։

Նախկին ընտրութեան միջոցին մեծամասնութիւնը Ասլանեան եպիսկոպոսի կողմն էր։ Ասլանեան և Վահան վարդապետ տարբեր ուղղութեան տէր մարդիկ էին, ու բոլկարահայ դաղութը փաստեց, որ ինքը Ասլանեանի ուղղութեան պատկանող առաջնորդներ է ցանկանում ունենալ։ Բնական է որ Ասլանեանին ձայն տուողները այսօր նրա պէսին պէտք է քուէ տայ։

Նոր ընտրութիւնները իբր թէ անյարմար են երկրի ներկայ տրամադրութիւնների, այդ անտեղի փաստաբանութիւն է։

Եթէ կառավարութիւնը գիտէ և համաձայն է որ այսուհետեւ մեր գաղութը էջմիածնի թեմ լինի, ոչ մի նշանակութիւն չունի։

Նոր ընտրութիւնները՝ կարող են սղմկալի լինել մեզ համար, նորից կրքերի գրգռում առաջ բերելով և զանազան կուսակցական խնդիրներ յարուցանելով։ Մանաւանդ երբ Տաճատ վարդապետը դաշնակցական է համարվում, նրա ամեն մի լաւ տրամադրութիւնը կարող է հակառակորդների կողմից թիւր կերպով բացատրվել, իսկ դաշնակցականներն էլ նրան իրենց մարդը կարծելով՝ կաշխատեն նրան իլենց ուզածի պէս վարել։ Այս երևոյթներից պէտք է խուսափել.....հիները ընտրված են եղել գրեթէ առանց այդ բարդութիւնների։

Չը պէտք է ուրանալ որ Տաճատ վարդապետի դրութիւնը շատ փափուկ կը լինի, եթէ այս տեղ էլ դաշնակցականները կովկասի «ընկերներ»ի ուղղութեամբ ընթանան ընտրողական գործերում։ Անցեալ անգամ նկատել էինք որ երիտասարդ վարդապետը Կովկասում բաւական ծանր փորձ ունեցաւ։ Անշուշտ այդ փորձը ապարդիւն չէ անցել, սպասենք որ իր վրա դրված ծանր պարտականութեան տակից ազատից աւելորդ և աննպատակ աղմուկների դուրս գայ։ Բնական է որ խնդիրը աւելի կեն դանի կերպարանք պիտի առնէ, երբ առաջնորդական թիկնածուների անունները մէջտեղ գան.... փորձաքարը թիկնածուներն են լինելու։

Բնական է որ «Նարժումը» այդ խնդրի մէջ ժողովրդի շահերի պաշտպանը պէտք է հանդիսանայ, «Նարժումի» թիկնածուն Ասլանեանն էր նախորդ ընտրութեան միջոցին. այսօր կը լինի նա ով համապատասխանում է Ասլանեանին։ Իսկ եթէ թիկնածուներին ճանաչելիս չը լինենք. «Նարժումը» լուռ կը մնայ։ Առանց ոչէ պատասխանատուութեան բաժին առնելու դալիք առաջնորդի վերաբերմամբ։(*)

(*) Մ. Խ. Այս յօդուածը գրվելէն վերջը Թելթիս խմբագիրը տեսակցութիւն մը ունեցաւ Կաթողիկոսի պատուիրակ Տաճատ վարդապետին հետ։ Երիտասարդ վարդապետին բացատրութիւններէն համոզում գոյացուցեր է որ ինքը Կաթողիկոսին դիւանապետ եղած է յայտնի կոնդակները երեւան գալէն վերջը. որ այդ կոնդակները երեւան եկած են ոչ դաշնակցականներու թելադրութեամբ, այլ անկախօրէն և ուրիշ ազգայիններու խորհուրդով։ Դաշնակցական շէֆերը իրենց «Յառաջ»ով սկիզբները երբէք չեն այ ուզած հետաքրքրուիլ այդ խնդրով, յայտարարելով «ով է հիմա հետաքրքրվում եկեղեցական խնդիրներով. ինչ ուզում են թող անեն»։ Վերջը երբ գործը իրական հողի վրա դրուեր է, այն տեղն դաշնակցական շէֆերը որոշեր են կացութեանը տիրանալ։

Տաճատ վարդապետ համակրելով հանդերձ դաշնակցութեան, երբէք շէֆերուն գործիքը չէ եղած Կաթողիկոսի վրան ճնշում բանեցնելու։ Եւ եթէ ուզենար ալ. չը պիտի կարենար, որովհետեւ իր ուժերէն և գիրքէն վեր կը համարվի։

Յայտնի պատուիրակը շուտով պիտի մեկնի Սոֆիա ներքին գործոց նախարարին հետ տեսնուելու իր միսսիային մասին հաղորդելու համար։

Ան իր գործին մէջ պիտի ղեկավարվի միմիայն Պուլկարիոյ հայ գաղութին շահերը աչքի առաջ ունենալով։

Մեր կարծիքով երիտասարդ վարդապետին ուժ տալու է գործը գլուխ հանելու. առանց խծբծանքներու ենթարկելու. որովհետեւ ան եկած է մեր գործերը կարգադրելու. իր բրռնած դիրքէն վերջն է որ պիտի կարենանք դատողութիւններ ընել իր մասին։

ԱԶԴ

Վաղը, կիրակի, 1 Հոկտեմբեր, Վարագայ Ս. Խաչի տօնին և Վեհափառ Հայրապետին Օծման 14-րդ. տարեդարձին առթիւ, Ն. Ս. Օծութեան Եւրոպայի Հայ գաղութների Նուիրակ Գերաշնորհ Տէր Տաճատ վրդ. հանդերձեալ է հանդիսաւոր Ս. պատարագ մատուցանել և իր պերճախօս քարոզութեամբ հոգևորապէս մխիթարել բարեպաշտ ժողովուրդը։

Զայս ի գիտութիւն բարեպաշտ ժողովրդեան կը ծանուցանեմք,

Թաղական խորհուրդ Ս. Սարգիս եկեղեցւոյ

Վառնա, 30 Սեպտեմբեր 1906

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Լօրէնս Մասս (Ամերիկա)

Մինաս Ոսկերչեան. ձեր լիրը կարթը ընդունեցինք։ Լրբաբար սուտ կը խօսիք, երբէք թերթը ետ չէք դարձուցած. պարտքերնիդ կլլել կուզէք։ Եւ խուլիկանութիւն է որ կընէք։ Ձեր սպառնալիքը ձգեցինք այնտեղ ուր կը նետուին այդ տեսակ թղթերը որոնք շաւական թւով եկած են ձեզ նմաններին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վառնայի նահանգապետի կարգադրութեամբ հինգ ոստիկաններ արտաքսուած են իրենց պաշտօնէն, ոլովհետեւ անցեալ կիրակի հակայունական ցոյցի ատեն, հակառակ իրենց տրուած հրամանի, մելիժեր են ատլճանակ պարպել։ Վառնայի Բօսալիպկէներու ձերբակալուած անդամները բոլորն ալ դրամական երաշխաւորութեամբ ազատ արձակուած են։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Գերման դեսպանը Սուլթանին դիմում ըրած է որ արտօնուի Պաղտատի երկաթուղիին մէկ ճիւղը շինել, Կակոլուէն—Ատանա։

— Թուրքիան պատերազմի կը պատրաստուի կը կարծեն. որովհետեւ շատ մի պատերազմական ձիեր կը գնէ Ռուսիոյ և Ունգարիոյ մէջ։

— Ցոյները Պիթոլիա նահանգին մէջ պուլկար գիւղի մը բնակչութիւնը կոտորեր են թւով 200 հոգի։ Թուրք զինուորներ անտարբեր հանդիսատեսներ եղեր են։

ՌՈՒՍԻԱ

Բեթերսպուրկէն Պերլին կը հեռագրեն թէ շուտով ցարի նախագահութեամբ նախարարական ժողով պիտի տեղի ունենայ յեղափոխութեան դէմ միջոցներ խորհելու համար։

— «Թայմզ» կը հաղորդէ որ ցարին, Ֆինլանդիա մեկնելէն առաջ, զօրահանդէս մը ըրած միջոցին քանի մը տեսեր հրացան պարպուեր է ցարին վրայ։

— Անգլիական պատգամաւորութիւնը, որ պիտի այցելէր նախորդ Ցուլայի անդամնեռուն որոշած է չերթալ Ռուսիոյ իշխանութեան հետ. թուրքմացութիւններ ունենալու փախէն։

—Լոտզի մէջ ընդհանուր գործադուլ է։ Գործարանները, դպրոցները գոց են։ Թրամվայները չեն աշխատիր։ Գոց են նաեւ խանութները։ Զինուորները կը պտտին քաղաքին մէջ, կը կատարեն խուզարկութիւններ և կը ձերբակալեն գործադիր ընողներ։

ԳԵՂՈՒՆԻ

Ի ՆՊԱՍՏ ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ԱՐԿԱԾԵԱԼՆԵՐՈՒ.

Գեղունի իր ծանօթ ծրագրով, իրեն յատուկ գեղարուեստական եւ գրական բովանդակութեամբ հրատարակուած է Կովկասահայ մեծ զանգուածը փութկոտօրէն սփոփեց արկածեալ թրքահայը։ հիմա ինքն է լացողը, ինքն է վիրաւորվածը, եւ ինքն է սովի եւ կրակի մատնուածը այդ մեր հայութեան ամենէն ազնիւ զաւակներուն հիմա ձեռք կուտայ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ. ձեռնպահ չի մնար եւ Գեղունին, որ Կովկասահայուն սրտին մէջ համակրանքի բաժին մուտնի։ Ս Ղազար 1000 օրինակ այս նոր Գեղունիէն (1906) յղեց Թիֆլիզի ի նպաստ Կովկասահայ արկածեալներու յանձնաժողովին. ընդհանուր հայութեան այն ամէն անհատ ու տառապեալներու գանձանակին մէջ՝ հաժեստ լումայ մը -10 ֆր. նետելու կարողութիւնն ունի, ցանկալի է որ դիմէ այդ յանձնաժողովին, ուսկից փոխարէն իր բարեգործութեան, կը ստանայ նոր հրատարակուած Գեղունին. որուն կատարելութեանը համար թերթին մի եւ նոյն վարչութիւնը ամէն ճիգ ու ջանք թափած է եւ աւելի եռանդով։

Գեղունի բաժնեգինն է 10 ֆրանկ։

Մեր հասցէն է՝ ԷՄԲՐԻՄԸՐԻ ԱՐՄԷՆԻԷՆ ՍԹ. ԼԻԶԱՐ ՎԸՆԻՍ (Իթալիա)

«ՆՈՐ- ՀԱՆԴԷՍԸ»

Նախաձեռնած ըլլալով Փարիզի Հ. Յ. Դ. Ուսանողական Մարմնի կողմէն, «Նոր—Հանդէսը» պիտի ջանայ ծանօթացնել հայոց մասին օտար լեզուով լոյս տեսած կարեւոր աշխատութիւնները եւ ամփոփ տեղեկութիւններ եւ տեսութիւններ տալ միջազգային հասարակական եւ քաղաքական այժմէութիւններու եւ եւ մասնաւորապէս հայկական հարցի եւ կեանքի իրականութեան մասին։

Խմբագրութեան հասցէ՝

6 Ռիւ Պէրթօլ. 6 Բարիզ (Ֆրանսա)

Печатница на П. Глушковъ С. Вар